ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու «Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխելու մասին» N63-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N1 հավելվածի 50-րդ կետի 3-րդ այունակում «Երևանի հ.50 մանկապարտեզ-դպրոց կրթահամալիր» բառերը փոխարինել «Երևանի հ.50 նախադպրոցական ուսումնական հաստատություն» բառերով.

2) N2 հավելվածի «Երևանի հ.50 մանկապարտեզ-դպրոց կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի հ.50 մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Աջափնյակ համայնքի «Մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է, որի հիմնադիրը Երևանի Աջափնյակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինն է /հիմք՝ Երևանի Աջափնյակ համայնքի ավագանու 02.07.2005թ. հ.123.15 և Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետի 10.08.2005թ. հ.191.15 որոշումները/։

«Մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր» ՀՈԱԿ–ը հիմնադրվել է 2001 թվականին, գտնվում է Նորաշեն 16 թաղամաս-1 հասցեում։ Կառուցվել է 1988թ.–ին, ունի 7475.0 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածք /շենքի մակերեսը՝ 2171.0 քմ/։ Ֆինանսավորվել է Աջափնյակ համայնքի կողմից։

«Երևանի հ.50 մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր» ՀՈԱԿ–ի կազմում ընդգրկված է մանկապարտեզ և հիմնական դպրոց։ 2009-2010 ուստարում մանկապարտեզը գործել է 98 երեխայով. փոքրերի առաջին -19 երեխա
փոքրերի երկրորդ- 30 երեխա
միջին խումբ - 23 երեխա
ավագ խումբ – 26 երեխա

Դպրոցը 2009-2010 ուստարում գործել է 125 աշակերտով, հետևյալ խտությամբ.

I դասարան	- 22 աշակերտ	VI դասարան	- 14 աշակերտ
II դասարան	- 18 աշակերտ	VII դասարան	-12 աշակերտ
III դասարան	- 13 աշակերտ	VIII դասարան	- 10 աշակերտ
IV դասարան	- 7 աշակերտ	IX դասարան	- 11 աշակերտ
V դասարան	- 18 աշակերտ		

Հաշվի առնելով, որ «Մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր»-ի հարևանությամբ գործում են հհ..155,185,188 և 195 դպրոցները և աշակերտ թվով ֆինանսավորման պայմաններում համապատասխան պետական կրթական չափորոշիչներ հնարավոր չէ ապահովել, անհրաժեշտություն է առաջանում դպրոցի հետագա գործունեությունը դադարեցնել։

Դպրոցի աշակերտների և ուսուցիչների տեղափոխությունը հարակից դպրոցներ կապահովվի։

Ելնելով «Իրավական ակտերի մասին» 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից՝ նախապատրաստվել է «Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխելու մասին» N 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխելու մասին» N 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

09 փետրվարի 2010թ. N 63-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Անվանափոխել Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հ.1 հավելվածի։
2. Հաստատել սույն որոշման հ.1 հավելվածում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն հ.2 հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված -1
Երևան քաղաքի ավագանու
09 փետրվարի 2010թ.
Հ. 63-Ա որոշման

Հ/Հ	ՀՈԱԿ–ի անվանումը	ՀՈԱԿ–ի վերանվանումը
ԿԵՆՏՐՈՆ		
1.	Երևանի «Կենտրոն» համայնքի №1 ՀՈԱԿ	«Երևանի h.1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
2.	Երևանի «Կենտրոն» համայնքի №6 ՀՈԱԿ	«Երևանի h.2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
3.	Երևանի «Կենտրոն» համայնքի №19 ՀՈԱԿ	«Երևանի h.3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
4.	Երևանի «Կենտրոն» համայնքի №20 ՀՈԱԿ	«Երևանի h.4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
5.	Երևանի «Կենտրոն» համայնքի №33 ՀՈԱԿ	«Երևանի h.5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
6.	Երևանի «Կենտրոն» համայնքի №35 ՀՈԱԿ	«Երևանի h.6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
7.	Երևանի «Կենտրոն» համայնքի №40 ՀՈԱԿ	«Երևանի h.7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
8.	Երևանի «Կենտրոն» համայնքի №47 ՀՈԱԿ	«Երևանի h.8 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
9.	Երևանի «Կենտրոն» համայնքի №49 ՀՈԱԿ	«Երևանի h.9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
10.	Երևանի «Կենտրոն» համայնքի №59 ՀՈԱԿ	«Երևանի h.10 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
11.	Երևանի «Կենտրոն» համայնքի №62 ՀՈԱԿ	«Երևանի h.11 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
12.	Երևանի «Կենտրոն» համայնքի №66 ՀՈԱԿ	«Երևանի h.12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
13.	Երևանի «Կենտրոն» համայնքի №70 ՀՈԱԿ	«Երևանի h.13 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
14.	Երևանի «Կենտրոն» համայնքի №96 ՀՈԱԿ	«Երևանի h.14 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
15.	Երևանի «Կենտրոն» համայնքի №131 ՀՈԱԿ	«Երևանի h.15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
16.	Երևանի «Կենտրոն» համայնքի №163 ՀՈԱԿ	«Երևանի h.16 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
17.	Երևանի «Կենտրոն» համայնքի №193 ՀՈԱԿ	«Երևանի h.17 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
18.	Երևանի «Կենտրոն» համայնքի №200 ՀՈԱԿ	«Երևանի h.18 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
19.	Երևանի «Կենտրոն» համայնքի №204 ՀՈԱԿ	«Երևանի h.19 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
20.	Երևանի «Կենտրոն» համայնքի №256 ՀՈԱԿ	«Երևանի h.20 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

21.	Երևանի «Կենտրոն» համայնքի №283 ՀՈԱԿ	«Երևանի h.21 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ԱՐԱԲԿԻՐ		
22.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի h.1 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.22 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
23.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի «Արաբկիր» h.2 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.23 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
24.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի Հրայր Կիրակոսյանի անվան h.3 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.24 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
25.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի h.4 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.25 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
26.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի h.5 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.26 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
27.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի Տիգրան Անդրեասյանի անվան h.6 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.27 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
28.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի h.7 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.28 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
29.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի h.8մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.29 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
30.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի «Մանկության մոլորակ» h.9 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի h.30 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
31.	«Հայաստանի Հանրապետության	«Երևանի h.31 նախադպրոցական

	Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի հ.10 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
32.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի հ.11 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի հ.32 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
33.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի հ.12 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի հ.33 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
34.	«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի հ.13 մանկապարտեզ նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ	«Երևանի հ.34 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ԱՋԱՓՆՅԱԿ		
35.	Աջափնյակ համայնքի «Թ.107 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.35 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
36.	Աջափնյակ համայնքի «Թ.108 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.36 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
37.	Աջափնյակ համայնքի «Թ.109 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.37 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
38.	Աջափնյակ համայնքի «Թ.156 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.38 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
39.	Աջափնյակ համայնքի «Թ.166 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.39 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
40.	Աջափնյակ համայնքի «Թ.188 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.40 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
41.	Աջափնյակ համայնքի «Գուրգեն Մարգարյանի անվան թ.197 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան հ.41 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
42.	Աջափնյակ համայնքի «Թ.198 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.42 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
43.	Աջափնյակ համայնքի «Թ.225 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.43 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
44.	Աջափնյակ համայնքի «Թ.233 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.44 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
45.	Աջափնյակ համայնքի «Թ.243 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.45 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
46.	Աջափնյակ համայնքի «Թ.265 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.46 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
47.	Աջափնյակ համայնքի «Թ.278 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.47 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
48.	Աջափնյակ համայնքի «Թ.310 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.48 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
49.	Աջափնյակ համայնքի «Թ.311 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.49 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

50.	Աջափնյակ համայնքի «Մանկապարտեզ–դպրոց կրթահամալիր» ՀՈԱԿ	«Երևանի հ.50 մանկապարտեզ -դպրոց կրթահամալիր» ՀՈԱԿ

ԱՎԱՆ		
51.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ, հ. 2 մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.51 մսուր մանկապարտեզ հիմնարկ
52.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Հ. 3 մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.52 մսուր մանկապարտեզ հիմնարկ
53.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Հ.4 մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.53 մսուր մանկապարտեզ հիմնարկ
54.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Հ. 5 մսուր-մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.54 մսուր մանկապարտեզ հիմնարկ
55.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Հ. 6 մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.55 մսուր մանկապարտեզ հիմնարկ
56.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Թիվ 9 մսուր-մանկապարտեզ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ 56. մսուր մանկապարտեզ հիմնարկ
57.	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ Հ.10 մանկապարտեզ հիմնարկ	«Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ հ.57. մսուր մանկապարտեզ հիմնարկ
ԴԱՎԹԱՇԵՆ		
58.	Դավթաշեն համայնքի «Թիվ 146 մսուր–մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.58 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
59.	Դավթաշեն համայնքի «Թիվ 172 մսուր–մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.59 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
60.	Դավթաշեն համայնքի «Թիվ 219 մսուր–մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.60 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
61.	Դավթաշեն համայնքի «Թիվ 312 մսուր–մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.61 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
62.	Դավթաշեն համայնքի «Թիվ 318 մսուր–մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.62 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ԷՐԵԲՈՒՆԻ		
63.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.63 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
64.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 28 մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

65.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.65 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
66.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 86 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.66 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
67.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 90 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.67 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
68.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 91 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.68 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
69.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 100 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.69 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
70.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 203 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.70 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
71.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 206 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.71 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
72.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 291 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.72 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
73.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի թիվ 292 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.73 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
74.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի Զրաշեն մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.74 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
75.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Էրեբունի համայնքի Մուշական մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.75 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ՄԱԼԱԹԻԱ–ՍԵԲԱՍՏԻԱ		
76.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 11 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.76 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
77.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 17 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.77 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
78.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 74 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.78 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
79.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 105 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.79 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
80.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի Աշոտ Խաչատրյանի անվան թիվ 115	«Երևանի Աշոտ Խաչատրյանի անվան հ.80 նախադպրոցական ուսումնական

	համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	հաստատություն» ՀՈԱԿ
81.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 116 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.81 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
82.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 117 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.82 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
83.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 167 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.83 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
84.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 169 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.84 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
85.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 212 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.85 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
86.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի Լյովա Կատվալյանի անվան թիվ 215 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի Լյովա Կատվալյանի անվան հ.86 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
87.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 220 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.87 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
88.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 241 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.88 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
89.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 266 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.89 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
90.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 276 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.90 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
91.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 279 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.91 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
92.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 288 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.92 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
93.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 296 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.93 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
94.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 303 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.94 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
95.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 305 համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.95 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
96.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Հեքիաթ» համալիր	«Երևանի հ.96 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

	մանկապարտեզ ՀՈԱԿ	
97.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Նարինե» համալիր մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.97 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
	ՆՈՐ ՆՈՐՔ	
98.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Երևանի հ.98 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
99.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.99 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
100.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.100 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
101.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.101 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
102.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.102 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
103.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.103 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
104.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Երևանի հ.104 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
105.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.105 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
106.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.106 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
107.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.107 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
108.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 13 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.108 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
109.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 14 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.109 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
110.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.110 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
111.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 16 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.111 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
112.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 17 մանկապարտեզ»	«Երևանի հ.112 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

	ՀՈԱԿ	
113.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 19 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.113 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
114.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 20 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.114 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
115.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 2 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.115 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
116.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 23 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.116 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
117.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.117 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
118.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 25 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.118 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
119.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 27 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.119 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
120.	«Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.120 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ՆՈՐՔ–ՄԱՐԱՇ		
121.	«Թիվ 53 մսուր –մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.121 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
122.	«Թիվ 57 մսուր –մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.122 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
123.	«Թիվ 142 մսուր –մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.123 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
124.	«Թիվ 168 մսուր –մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.124 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ		
125.	Հայաստանի Հանրապետության «Երևանի Նուբարաշեն համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի հ.125 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ՇԵՆԳԱՎԻԹ		
126.	Շենգավիթ համայնքի թիվ 7 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.126 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
127.	Շենգավիթ համայնքի թիվ 9 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.127 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
128.	Շենգավիթ համայնքի թիվ 75 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.128 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
129.	Շենգավիթ համայնքի թիվ 97 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.129 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
130.	Շենգավիթ համայնքի թիվ 111 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.130 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
131.	Շենգավիթ համայնքի թիվ 113 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի հ.131 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

132.	Շենգավիթ համայնքի թիվ 143 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.132 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
133.	Շենգավիթ համայնքի թիվ 150 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.133 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
134.	Շենգավիթ համայնքի թիվ 170 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.134 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
135.	Շենգավիթ համայնքի թիվ 174 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.135 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
136.	Շենգավիթ համայնքի թիվ 175 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.136 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
137.	Շենգավիթ համայնքի թիվ 177 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.137 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
138.	Շենգավիթ համայնքի թիվ 179 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.138 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
139.	Շենգավիթ համայնքի թիվ 195 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.139 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
140.	Շենգավիթ համայնքի թիվ 196 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.140 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
141.	Շենգավիթ համայնքի թիվ 202 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.141 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
142.	Շենգավիթ համայնքի թիվ 230 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.142 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
143.	Շենգավիթ համայնքի թիվ 244 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.143 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
144.	Շենգավիթ համայնքի թիվ 255 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.144 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
145.	Շենգավիթ համայնքի թիվ 264 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.145 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
146.	Շենգավիթ համայնքի թիվ 298 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.146 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
147.	Շենգավիթ համայնքի թիվ 301 մսուր–մանկապարտեզ ՀՈԱԿ	«Երևանի h.147 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
ՔԱՆԱՔԵՌ–ԶԵՅԹՈՒՆ		
148.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.148 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
149.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.149 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
150.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.150 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
151.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.151 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
152.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.152 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
153.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.153 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

154.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.154 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
155.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.155 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
156.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.156 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
157.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.157 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
158.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.158 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
159.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 12 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.159 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
160.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 13 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.160 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
161.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 14 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.161 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
162.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ	«Երևանի h.162 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հավելված -2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«09» փետրվարի 2010 թ.
Հ.63-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ----------
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ
Գրանցման համարը ----------
Գրանցման ամսաթիվը ----------
Վկայականի համարը ----------
Ծածկագիր ----------
Բաժնի պետ ——————————

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի h ------- նախադպրոցական
ուսումնական հաստատություն»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության

ԵՐԵՎԱՆ 2010

Երևանի հ.--------- նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարել ---------- համայնքի հ.------/նուհ/ մանկապարտեզի իրավահաջորդը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **«Երևանի քաղաքապետարանի հ.----- նախադպրոցական ուսումնական հաստատություն»** համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է,որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ----------:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների

ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությա ն հետևյալ տեսակներով

ա) լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում.

բ) մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում.

գ) զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզավորման հիման վրա:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատություն ընդունվում են մինչև 6* տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա:

18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝

ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը.

բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.

գ) առողջարանային մանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական ծրագրերի գերակայությամբ.

դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և խորհրդատվական ծառայություններ.

ե) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.

զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.

է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչև 6* տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:

20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է

հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

20. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

21. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

22. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

23. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

24. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

25. Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

26. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

27. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

28. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

6* - «ՆԴ կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի գ կետի համաձայն՝ 6,5 տարին փոխվել է 6-ի:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը(այսուհետ՝տնօրեն):

30. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,

բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը,

զ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,

է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

33. Երևանի քաղաքապետը իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

34. Երևանի քաղաքապետը `

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) Երևանի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը .

ը) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, Երևանի քաղաքապետի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Երևանի քաղաքապետի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում, Երևանի քաղաքապետի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ ան:

39. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

40. Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

41. Երաժշտական ղեկավարը՝

ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.

42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատութունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

49. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, Երևան քաղաքապետի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է Երևանի քաղաքապետարանը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: